

ԳԱՅՄԱՆԻ

ՊԱՆԿԱՐԻՆ

Տարեկան . . 12 Ժր.
Վեցամսեայ . . 6 "


ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու թիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 Ժր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2,60 Տոյս
Վեցամսեայ 1,50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծրարացման տողը
20 լանդիւ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Տ

Rédaction
Lengasse No. 4
Ber. Pere G. Kalemkarian
Vienne
BULGARIA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ
լիւ տրութիւ

ԳՈՅՆԵՐՈՒ ԳԱՌԻԳԱԹԻՈՒՆ

Ժողովուրդի հասարակ դասուն մէջ երբ հանդիպինք այնպիսի մարդոց որոնք սրբ քանի մը տեսակ և իրար հակասող կարծիքներ կը յայտենեն, զգուանքի ու տհաճութեան յայտարար նշանը անմիջապէս դիւրեբրնուս վրայ կարտայայտուի և «գռեհիկ, յիմար ապուշ» անանկները անոնց հասցէին ձօնելով կը հեռանանք:

Բայց երբ իրար հակասող, զիրար ջրող կարծիքներու և գոյնեւորութեան զաւթաթիւնը կը ներկայացնեն այնպիսի մարդիկ՝ որոնք բարձրէն ժողովուրդին հետ խօսելու, հասարակութեան միտքը լուսաւորելու, ասոր որոշ գաղափարներ ներշնչելու հաւակնոտութեամբ հրապարակախօսի բեմին վրայ կանգնած ճշմարտախօսի մը, անկեղծի մը ու արդարագատի մը հովիւր կառնեն, ո՞ր աստիճան զրգուանք զգալու է ուշիմ գիտող մը այդ գոյնեւոր հեքոսներուն հանդէպ եւ ո՞ր աստիճան արգահատանք գանձը հաճութեամբ ու միամտութեամբ ունկնդրող ամբոխին համար:

Գոյնեւոր ուսօրինակ գաւթաթիւններ վերջին տարիներու մէջ մանաւանդ արտասահմանի հայ գաղթականութեան աչքին յաջորդաբար կը պարզուին: Ժողովուրդը կարծես ա՛յլ կը վախճուի մէկ անձը քանի մը տեսակ գոյնեւորութեան մէջ տեսնելու, և կորագլուխ ունկնդրողներ ալ կը գտնուին այդպիսիներուն:

Բայց պէտք է նկատել թէ երբ այդ գոյնեւոր հեքոսները—որոնց մէկ քանին մատնանիչ ընել աւելորդ կը դառնայ այս առթիւ—միմիայն իրենց կաշին քաշքշելու, իրենց եսին գոհացում տալու ապահովութիւնը ձեռք ձգելու համար, ազգային էն նուիրական հարցերով կը զբաղին, հայրենասէրի, յեղափոխականի դիմակներու տակ իրենց գունափոխութիւնները ընչազաղցութիւնը և փառասիրութիւնը ծածկել կուզեն, ասոնք ժողովուրդին նուիրական զգա-

ցումներուն հետ խաղաղ թրջուառներ են, որոնք ամբողջ սերունդ մը անբարոյականացնելու կը ծառայեն, եթէ այդ ժողովուրդը իր ամէն կարգացած ու լսածը բառական իմաստովը սխալ դատէ և չը հետամտի այդ տաք ու պաղ փչող բերաններու ներքին մարդը ճանչնալու:

Այո՛ հրապարակի ձեռնածուներու էնթրիքներէն չխաբուելու համար հասարակութիւնը պարտի նախ իր հետ բարձրէն խօսող անձերուն ներքինը, անհատականութիւնը և անցեալը քիչ մը քննել, պըրպտել, որպէս զի չճանայ շողջողուն ու թռթռուն բառերով ու կեցո՞ժողովը դեղահատներէ, համոզուած ըլլալով թէ ասոնց է՛ն դառնը, է՛ն թունաւորը յղուելու և ոսկեզօծեալ կըլլալ ընդհանրապէս:

Ժողովուրդը անգամ մը այդ դեղահատը իրեն մատուցանող դիմակաւորներու ներքին մարդը իր անցեալովը քննել վերջ պիտի հասնի այն եզրակացութեան թէ նուիրական զգացումներու, որբազան պարտականութիւններու մասին իր հետ բարձրէն խօսողներուն շատերը ընչաքաղց, եսամոյ դիմակաւորներ են, որոնք իրենց կաշին քաշքշելու, իրենց եսին գոհացում տալու համար ստեպ շապիկ փոխելու նման գոյն կը փոխեն, այնպէս որ իրենց քանի մը տարուան կեանքը եթէ ի մի ամփոփես, գոյնեւոր գաւթաթիւնը մը կը ներկայացնէ խղճաւորքէն:

ԳՈՒՐՄԵՔ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

(ՄԵՐ ՄԱՍՆԱՌՈՐ ԲՂԹԱԿԵՆ)

Ոֆիս, 21 Մայիս

Այսօր կէսօրէն առաջ Պուլկարիոյ Պատրիարքական փոխանորդ Հայր Գեորգի Կահան Ծ. Վրդ. Յակոբեան, ընկերակցութեամբ Աթ. Տէր Օհան Մանգուկունի հօր, Տիար Երուանդ Ֆրնտրաքանի և նշանաւոր հրապարակագիր Օսկան Իսկէնտէրի առաջին անգամ ըլլալով պաշտօնապէս այցելեց նախարարապետ և նախարար Արտա-

քին և Կրօնական գործոց զօրավար Բաշօ Փէթրովի:

Այցելութիւնը շատ փառաւոր և հանդիսաւոր եղաւ: Նախարարապետը խիստ սիրալիւր ընդունելութիւն մը ըրաւ անոնց: Փոխանորդ Հայրը նախ յայտնելով Պոլսոյ Հայոց Պատրիարքին հայրական ողջոյնները, յարեց թէ ինք եկած է նախ և առաջ Պուլկարիոյ հայաբնակ քաղաքները հովուական այցելութիւն մը տալէ յետոյ ձեռնարկել պաշտօնական Առաջնորդարանի մը հաստատութեան և օրինաւորապէս ընտրուած և հաստատուած պատրիարքական փոխանորդի մը կամ Առաջնորդի մը ընտրութեան որ ազգին կողմէն պուլկար կառավարութեան քով ներկայագուցիչ և ազգային ու կրօնական գործոց միջնորդը հանդիսանայ անոր քով: Նախարարապետը ի պատասխանի ըսաւ թէ միշտ եղբայրական և սիրելի զգացումներ կը տածէ զէպի հայերը և թէ ամէն միջոց և գիւրութիւն պիտի ընձեռնէ նորին Գերապատուութեան յայնաւ փափաքները եւ մտադրութիւնները արդիւնաւոր ընծայելու և անոր աշխատութիւնները ի մասին օրինական Առաջնորդի մը ընտրութեան յաջող վախճանի մը հասցնելու և իրականացնելու համար:

Նոր նախարարապետին յայտնած զեղուն զգացումները և տածած անկեղծ գաղափարները հանդէպ հայ ազգին և անոր քաղաքական խօսքերը մեզ համար նշանակալից են և երախտապարտ ու շնորհապարտ կը կացուցանեն զմեզ: Այս սովորուած լեզու թէ Գեորգի փոխանորդ հայրը որ բեղուն մտքի մը տէր, ըստ ամենայնի փորձառու մարդ և վարչական գունդունակութեամբ օժտուած անձնաւորութիւն մըն է, իրեն յանձնուած պաշտօնին ամենէն յարմար անձը կը ներկայանայ: Ոսելու նշանաւոր կարողութիւն և բոլոր իրեն հետ խօսողները առ ինքն յանկուցանելու ձիրքն ունի, և անկեղծօրէն խօսելով կը դերազանցէ իւր միտքն և խորհրդները, և արդէն իւր մանկապն ալ իր նախորդներէն բոլորովին տարբեր կերպով է: Եկած է աւելի լիազօր իշխանութեամբ, ինչ որ իր պաշտօնը և իր գործադրելիք միջոցները աւելի զրական ընելու կը ծառայէ: Եւ միթէ՞ այդ լիազօրութեան պակասը չէ՞ որ իր նախորդներու բոլոր ըրածները ամբողջութեամբ կը դատաւարատէր: Ինչպէս բացատրած ենք, այցելութեան շրջանը լրանալէ յետոյ, Պուլկարիոյ հայաբնակ քաղաքներէն գաւառական ժողով մը կազմելու և ըստ օրինի մի քանի ընտրելիներու մէջէն Առաջնորդ մը ընտրելու ապա ըստ այնմ տնօրինելով յարակից պէտքերը և

պարագաները (Առաջնորդարան, վարչութիւն, և այլն), անո՛ր, ինչ որ պիտի կատարէ փոխանորդ հայրը, և այսպէս ձեռք բերուած արդիւնքին օգուտները հարկ չէ անդամ մը եւս կրկնել հոս: Միայն սա ալ չը մոռնանք ըսելու թէ, մենք, ժողովուրդս ալ, այլ բանին յաջողութեան և իրականացման մէջ օժանդակութեան մեծակ բաժին մը ունինք, և կը յուսամ թէ Պուլկարահայերս, երբ առիթը ալ եւս մեր փոխ մէջը ունինք, պիտի գիտնանք պէտք եղած կերպով օգտուել անկէ:

ԱՐՄԵՆԱԿ

ԱՆՍՈՒԱՆԱԼԻ
ՇԱՀԷՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Շա. ՅՅրդ. թիւն)

Վերջապէս Շահէն Կիպրուսի մէջ շրջապատուած էր իր նախկին ընկերներէն: Շահէնի տէնչը ու փափաքը գործելու և կոռուի էր, ուրիշ ոչինչ: Պէտք է գիտնալ որ Շահէն կուսակցամուլ չէր:

Արդէն 86ի պատակաւոր գինքը այն համոզման բերած էր թէ՛ Հիշակեանութեան դուրս պէտք էր փնտռել գործելու ասպարէզ: Ապացոյցն էր նազարէկեաններու և Արփարականներու գերար բզբտելն և մղած կորուստը: Շահէն Կիպրուսի մէջ կը ծանօթանայ Հ. Յ. Դաշնակցութեան կոմիտէին որով կը խրախուսուի թէ կայ գործելու ասպարէզ մը: Ինչ ինչ նկատուներով և պարագաներ ի նկատի ունենալով Հ. Յ. Դաշնակցութեան կոմիտէի հետ իրենց եղած ծրագիրը գործադրելն կը յետաձգուի:

Շահէնի հետ եղիպտոս կը գըտնուէինք, իր վիճակն անտանելի կը դառնար անձնական ու եւ իցէ գործ մը ձեռք չը բերելուն պատճառաւ: Թէեւ Շահէն ունէր իր շատ մօտիկ բարեկամը Տ. Մ. որ բաւական հարուստ էր և կը փափաքէր միշտ օգնել: Բայց Շահէնի այնչափ հաճելի չէր ու կըսէր, «Զէ՛ որ վերջէն վճարել պէտք է այս անգործութեամբ ուսկի՞ց պիտի վճարեմ»:

Ես ևս եղիպտոսի մէջ անձնական գործ մը ձեռք բերելու չյաջողելուս պատճառաւ որոշեցի 98 թուականին կովկաս երթալ: Շահէն ալ ինձ վիճակակից ըլլալով չուզեց որ իրարմէ բաժնուէինք:

Դաշնակցութեան կարեւոր գործիչներէն քանինները գիտէին թէ արդէն եղիպտոս գտնուած միջոցնիս երկուքս ալ Դաշնակցութեան բարեկամ և հա-

մակիր էինք: Թիֆլիսի մէջ Դաշնակ-
ցութիւնը ունէ՛ր ընդհ. ժողով. եւ ո-
րոշուած էր որ Դաշնակցութեան կա-
րեւոր գործիչներէն Ս. եւ Շահէն ...
երթան: Գործիչներէն քանիներ մեզ
պարզեցին ընդհ. ժողովոյ որոշումն
եւ Շահէն ուրախութեամբ ընդունեց:
Բանակցութիւնը վերջացած եւ ամեն
ինչ որոշուած էր այլեւս:

Կովկաս մնալու անկախութիւնը
կամքս անկախ պատճառներով ստիպ-
ուեցայ եզրապահ վերադառնալ, որէ
օր կապառէի... Շահէնի նամակն առ-
նել, եւ ահա յանկարծ տեսանք սր
Ս. եւ Շահէն Աղէքսանդրիոյ հասան:
Երկուքի մէջ անհամաձայնութիւն ծա-
գած էր: Տեղական կոմիտէն միջամտեց
հարկ եղաւ Պիւռոյին գրել խնդիրը,
վարչապէս բաւական ատենէ վերջ ան-
կարելի եղաւ համաձայնութիւն գոյա-
ցնել, ու... երթալը յետաձգուեցաւ:

Ծովուն վրայ գրուած նամակ մը
առի Շահէնէն որ Ամերիկա կերթար
ու այսպէս կը գրէր ինձ:

«Գիտեմ պիտի գարմանաս, Ամե-
րիկա կերթամ քանի մը տարի
հոն մնալով հպատակութիւն ձեռք
«բերելու համար, քանի որ օր մը
«երկիր պիտի մտնամ եւ եթէ ձեր-
«բակալութիւն թիւրք կառավարու-
«թիւնը չի կարենայ զիս դատապար-
«տել, ահա այս նպատակով կերթամ»:

Վերջապէս Շահէնը Ամերիկահպա-
տակ եղեր էր ու վերադառնալով, Հնչակ.
հաստատութիւն կը պալանդէր որոնք ո-
րոշած էին զինքը... զրկելու եւ
ինքը ճամբայ ելած էր մինչեւ...
երթալու, բայց թուրքէն՝ բանտէ եւ
դատապարտութենէն չվախցող հերոս
Շահէնը դեռ որոշուած տեղն չի հասած
Փօթիի մէջ Հին Հնչակեաններու կող-
մէ սարքուած դաւադրութեամբ սրա-
խողովող կըլլայ, յարգելի յիշատակ
մը եւ անմոռանալի անուն մը թողլով
զինքը ճանչցողներու, ընկերներու ու
մտերիմներու սրտին մէջ:

Յ. ՃԱՆԿԻՒԼԵԱՆ
(Մնացեալը յաջորդով)

ԴԱՏԱՐԱՆԻ ԵՐՊՈՒՄԸ

— ԾԵՈՒՑ —

Արդէն յայկնի է մեր ազգայիննե-
րու դատարաններուն առջեւ կատար-
ուելիք երգման օրէնքները. որոնց
համեմատ ամէն բանակալ պետութեանց
մէջ իսկ, անհատ մը ազատ է իր պատ-
կանած կրօնքին ձէսերով եւ անոր
պաշտօնական միջոցաւ երգում տալ
դատարաններու առջեւ:

Այս օրէնքը անխուսափելի հետե-
ւութիւն է ներկայ ընկերական կազ-
մակերպութեան հիմերէն մին եղող
խղճի սպառնալիքն սկզբունքին, բա-
րեքողորարար Պուլկարիոյ մէջ ալ գո-
յութիւն ունի:

Եւ սակայն երբեմն կը գտնուին
ազգայիններ, որոնք կարեւորութիւն
չեն ընծայել ազգային ծէսով երգման-
լու լրաւութիւն, եւ նոյնիսկ երբ
հայ քահանան դատարանը ներկայ ըլ-
լայ կամ կանխաւ պատուիրէ՝ անոնց
որ հայերէն երգում պահանջեն, ա-
նոնք կարհամարհեն եւ կը ծաղրեն
իսկ քահանան ու իր առաջարկը
միամտաբար կարծելով թէ դրամի հա-
մար է որ այդպիսի մի բան կ'ըսուի
իրենց:

Արդէն քանիցս այս մասին խօսուած
է եկեղեցւոյն ընդէն հրաւիրելով ժո-
ղովուրդը որ նախանձախնդիր ըլլայ
իր տոհմային ծեսերուն եւ օտարու-
թեան մէջ մանաւանդ չը կորնցնէ
զանոնք յարգելու եւ յարգել տալու
առիթը ինչ համոզումի եւ ինչ ձգ-
տումներու ալ տէր եղած ըլլար:

Բոլորովին աւելորդ է հոս ընդ եր-
կար կրննել մեզ նման սղղի մը ու-
նենալիք օգուտը այս կարգի պաշտո-
նական առիթներու մէջ ցոյց տուած
նախաձայնողութիւնն: Կը բաւէ ան-
գամ մըն ալ յիշեցնել թէ ցոյց տըր-
ուած այդ կամովին զանազանութիւն-
ները օր մը կրնան ստիպողական դառ-
նալ մեզի համար, եւ մեր խղճի ա-
ղատութեան իրաւունքները տոնակոխ
ընել: Որո՞ւ պիտի բողոքենք այն ա-
տեն, երբ այսօր իսկ մենք մեր ձեռ-
քով կարհամարհենք զանոնք:

Հետեւեալը յարգող ազգայիններուն

ուշադրութիւնը կը հրաւիրեմ այս կէ-
տին վրայ, եւ կը խնդրեմ որ ամէն
առթիւ ի սէր Ս. եկեղեցւոյ եւ
մեր հաւածուած ազգին շահերուն,
նախանձախնդիր մնան անոնց ձէսե-
րուն ու պահանջներուն, գոնէ երբ
օրէնքը ինքնին կը թոյլատրէ զայն
մանաւանդ:

Մնամ աղօթարար
Սարգիս Բինչ, Ղարապետ

ԱԶԳԱՅԻՆ

ՊՈՒԼԿԱՐԱՆԱՅՈՑ Պատր. Փոխա-
նարդ Գեր. Տ. Վահան վրդ. Յակոբ-
եան Սօֆիայի եւ Թ. Բաղարճըղի ազ-
գայնոց կրօնական եւ կրթական գոր-
ծոց վիճակի մասին տեղեկագիրներ
զրկած է Պատրիարքարան: Այդ տե-
ղեկագիրները իսկուս ժողովը իր յա-
ռաչիկայ նիստին մէջ նկատողութեան
պիտի առնէ:

— ՌՈՒԽՍՈՒԳԻ մէջ երկու տարիէ
ի վեր պաշտօնավարող Տ. Արիստակէս
քննյ. Յէսիկան Պատրիարքարանի
հեռագրական հրամանին վրայ Գիւրգէ
գացած էր Զատիկի տօնական օրերուն
առթիւ: Սակայն Ռուսչուքի Թաղ.
Խորհուրդը քահանային այս համա-
կերպութիւնը իր կամքին հակառակ
վարժունք նկատելով զինք պաշտօնա-
վարութենէ, դադարեցուցած է: Այժմ
յիշեալ քահանան Պատր. Փոխ. Զօր
յանձնարարութեամբ Արիստակէս պաշ-
տօնի կոչուել է: Այս առթիւ ու
մենք Սիւրբաբեյի բաղդաւոր կը
նկատենք:

— ՄՈՒԾԻ Պատր. Փոխանորդ Մա-
լաղկերտի եւ Պուլանդի երկրաշա-
փին պատճառած աղէտները եւ ժողո-
վուրդին թշուառութիւնը եւ կարօտ
վիճակը նկարագրելով անմիջական
օգնութիւն խնդրած է Պատրիարքա-
րան: Այս վերջինը կը կարծուի ինչ-
պէս կարող երկրաշափին առեւ,
նոյնպէս եւ հիմա բարեկէր անձերու
նպատակն պիտի դիմէ: Մալաղկերտի
երկրաշափը կարող երկրաշափէն

աւելի աղէտաբեր կը նկատուի:

— ՀԻԻԱՆԴԱՆՈՑԻ ներքին պաշ-
տօնեաներուն մէջ զեղծումներ բըռ-
նուած են, եւ մանրամասն քննու-
թիւնով հաստատուած է թէ Հոգա-
բարձութեան փոխանորդութիւնը վա-
րող առաջնակարգ պաշտօնեաներէն
սկսած մինչեւ յետին պաշտօնեաները
զեղծումներ գործած են. այնպէս որ
գողութեանց ծայրը բռնուելէ վերջ
սկսել են իրարու զեղծումներ մէջտեղ
հանել. տառնք մինչեւ իսկ խնդր. որ-
բնու. յատկացուած նպարդէններն
ալ իրենց տունները կը փոխադրեն եւ
զեր: Արդեօք սիկարի թուղթի գոր-
ծին մէջ՝ զօր մենք մերկապարանոց
գրած էինք, որ աստիճան խոշոր գո-
ղութիւններ պատահած են. որքին
առջեւ տրուած պնակէն գողցողները
սիկարի թուղթի պէս վաճառելի ապ-
րանքներէն որչա՛փ աւելի գողցած
ըլլալու են: Զիշտ այս նկատուածով
անցեալ տարի մեր գրած մէկ երկու
խմբագրականները խիստ ծանր գտնող
պարտներուն ապանջները խօսին:
Մեր այնչափ ծանր գրելովը հանդերձ
Պիւռոյ մեղկ սցալ մասովը գերեզմա-
նային լուծութիւն պահած էր. իսկ
այժմ ինքն ալ սկսած է խոստովանել,
բայց չա՛տ ուշ:

— ԵԳԻՊՏՈՍԻ առաջնորդ Տ. Յով-
սէփ եպս. Այվազեան խնդրած է պատ-
րիարքարանէն սր ներուժ շնորհուի
Տ. Կարբէլի Կննյ. Զինճիքեանի:
Կրօն. ժողովը մերժած է այս խնդ-
բանքը:

— ԱՂԵՔՍԱՆԴՐՈՑ Թաղ. Խոր-
հուրդը նկատելով որ Պուլկարիայէ
մեկնելով ժամանակէ մը ի վեր հոն
հաստատուող Տ. Գեորգ Գննյ. Զլւր-
միւղեան, հակառակ Պատրիարքարանի
կողմէ գաղաղակալ ըլլալուն դեռ կը յա-
մառի պաշտօնավարել հոն, խնդրած
էր անոր Աղէքսանդրիայէ հեռացումը:
Կրօն. ժողովը այդ խնդիրը եզրապա-
սի Առաջնորդին ուշադրութեանը
յանձնել արժանի դատած է:

Այդ քահանան միեւնոյն ընթացքը
ունեցած էր քանի մը տարի տառաջ
Վառնայի մէջ. եւ Թաղ. մասուլ եւ
Պատրիարքարան իրար անցնելով հա-

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ

(81)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՌԵՐԱՆԳՈՒՄԸ ԱՂԵՔԻ

(ԿՈՏՈՐՍԵՒ ԱՌԱՅ)

— Կը կրննեմ, սիրելի աղջիկ, ընդմիջեց Միւր
Ախպար հարական քաղցր գործմանքն մ'արտայայ-
տութեամբը, քու վրէժդ հայութեան վրէժն է ու
անոր պարտականութիւնն է զայն լուծել ինչ գնով
որ ըլլայ: Հետեւեալը անհող եղի՛ր այդ մասին:
Ո՛հ, կը հաւատամ որ Աստուած մեր թշուառու-
թիւնը կը տեսնէ:

— Կը հաւատամ... մըմիջեց մանկամարդ աղջիկը
դառն ու կսկծալի չեչուով մը:

— Կը հաւատամ որ բարի է Ան:

— Կը հաւատամ:

— Կը հաւատամ որ չը լքեր մեզ բոլորովին:

— Կը հաւատամ... բայց, բարի հայր, չափէն
աւելի եղաւ մեր քաջածը... չափէն աւելի եղաւ
մեր թշուառութիւնը: Տեսաւ անմեղներու խողխող-
ուիլը, տեսաւ կոյս աղջիկներու բռնաբարութիւնը,
տեսաւ երկրին դաշտերը ոռոգող արիւնը, վերջապէս

լսեց օրօրոցի մանկան ճիչն ալ... ո՞ւր է... ինչո՞ւ
չը շանթահարեր չարագործ ձեռքերը... Ինչու կը
լռէ:

Միւր Ախպար՝ հոգւոյն ցաւը չը կրնար զսպել.
սկսաւ արտայայտել. յետոյ դողդալով իր ձեռքը
մանկամարդ աղջկան հրատապ ձակտին վրայ դրաւ
ու մըմիջեց:

— Զը յուսահատի՛նք. այս է գերի մը ճակատա-
գիրը: Տարիներէ իվեր համակերպած էինք գերու-
թեան լուծը կրելու, բռնաւորին կամայականու-
թեանը ծառայելու եւ ամեն տեսակ թշուառու-
թեանց ենթակայ ըլլալու... անշուշտ, այդ դրու-
թենէն ազատելու համար շատ նեղութիւններ պիտի
քաշենք: Այս երկրին լեռներն եթէ լեզու ունենային,
աղջիկ, պիտի պատմէին քեզի թէ ինչե՛ր անցած
են հայուն գլխէն, թէ ինչե՛ր կրած են հայ կիները...
Բայց ասոնք եկած անցած են չարաշուք ստուերնե-
րու պէս... Օր մըն ալ մեր քաջածնիքը կանցնին...
բաւական է որ կանչենք Աստուած ու աշխատինք
մեր կարողութեան չափով:

Մանկամարդ աղջիկը կը զգար թէ այդ ձայնը կը
սփոփէր զինքը, կը հանդարտէր իր կուրծքին տակ
լեցուած սիրտը... կը զգար թէ յուսոյ ճառա-
գայթ մը կը թափանցէր իր հոգւոյն մէջ՝ անոր աչ-
քերու նայուածքէն:

— Հիմա շատ սպասել չի գար, աղջիկ, յարեց
ձեռուներն: Ես կամայ մը վար կիջնեմ ու վաղուընէ
սկսեալ հարկ եղած միջոցները կը փնտռեմ քու փա-
խուստդ դիւրացնելու համար:

— Բայց... չեչուեց մանկամարդ աղջիկը:

— Ինչ կայ, հարցուց Միւր Ախպար:

— Պէ՛տք է այս հրէշը ձեռքովս սատկեցունեմ ու
այնպէս հեռանամ... եթէ ո՛չ...

— Կը վախնամ անկից... ընդհատեց Միւր Ախ-
պար:

— Ամենեւին... միայն թէ այդ հրէշը թշուառ
երիտասարդի մը արեւնը պիտի մանէ, թոթովեց
մանկամարդ աղջիկը՝ հոգւոյն ճիւղ խղիւղով:

Միւր Ախպար այդ տաքտալի բացատրութեան
հանդէպ չը կրցաւ մէկէնիմէկ խօսիլ: Մանկամարդ
աղջկան երեսը նայեցաւ, անոր աչքերու մէջ շողա-
ցող արցունքը դիտեց ու ճիւղ մը ընկելով ինքնիւր
վրայ, բացաղանջեց:

— Ուրեմն, աղջիկ, անոր արեւնը մեր վիզն է՝
չէ՞ մի:

— Այո՛, հայր իմ, հեծկտաց մանկամարդ աղ-
ջիկը:

— Խիստ լա՛ւ. թո՛ղ Աստուած վկայ լինի, ահա՛
այս վայրկեան կը խոստանամ քեզի հետ գլուխ
հանել առաջադրած նպատակդ: Այդ հրէշը մեր ամե-
նուս թշնամին է...

Մանկամարդ աղջկան արցունքով լի աչքերուն
մէջ ոգևորութեան ու արեւութեան ճառագայթ մը
անցաւ ու իր հոգին ցնցեց:

— Ո՛հ, բացաղանջեց մանկամարդ աղջիկը, գուցէ
դուն զաւակներու տէր ես, ինչու համար կեանքդ
այս տեսակ վտանգի մը մէջ կը դնես... Միայն
թէ հսկէ՛ իմ վրաս... երբ վրէժս լուծեմ, գնա՛,
պատմէ՛ թէ՛ Աստուծոյ աղջիկը բռնաբարուած պատ-
ւոյ մը վրէժը լուծեց ու այնպէ՛ս մեռաւ...

— Ըսի՛ թէ՛ քեզի համար այս սեմերէն ներս մըտ-
նելու հարկադրուած էի, աղջիկ. հետեւեալը մի-

պիւ կարելի եղաւ հետաքննել քաղաքէս: Յետոյ Պորկազի մէջ ալ նոյն դիրքը բռնած ըլլալով, տեղւոյն թաղ. խորհուրդը կ'առաջարկէր Թեմայի միջոցաւ միայն զանի կրցած է հետաքննել: Պէտք է աւելցնել թէ մարդը որչափ պիտի դերս աչնչափ ալ վարպետ է, գտնուած քաղաքին մէջ տիրող ժողովրդական երկպառակութիւններէն օգտուել կը ջանայ միշտ:

— ԴԱՎԻԴԻՔԻ կրթական գործին յատկացեալ գումարներէն 18,000 ռուպլի այսօր կորսուած վիճակի մէջ կը գտնուի Սեւան եւ Միքայէլեան վաճառատներուն անանկանայուն հետեւանքով: Տեղւոյն ազգային կը ջանան թափած իւր ըստ կարելոյն ժողովուրդ, պատասխանատու բռնելով հոգարարական երբ:

Ի ՂԱՆԻ

ԱՆՁՆԱՅԻՆՈՒԹԻՒՆ ՄԵ



Մուկըմ-էֆ

Միւլէթի տաշարմարդ պիր ուֆազ ֆէտաքեարդ իմ միշտ օյմագ եանի քէօկէտէ հաթան գուգու յաւալ իշին տօլաշան պիր ճանապարհան սազընտըրմագ արգուսը իլէ շու մէքթուպըմըն մէթէպէր իրաշնաք կազէթանըզ տէր ճիւրի իսթիհամ իտէրիմ:

Շէօլէքի՝

Վարնատա, Պուքէշտէ, պախուսուս Սթանպուլում թանըլըջ օլան թիւարարտան Սարգիս էֆ. Սըմալ-եան Մայիս Դան պաշրմա պիր գուրշուն սրգարագ քէնտիսին թէլէք իթ. միշտ տիր. վէ ի գէրիսէ աթիտէքի մէքթուպ պուլըմըջ աըր:

«Պու կիւն Մայիս եա 4 եա 5 ի տիր գիհին օ պատար գորըլըջ քի ազլըմըն 4է 3 զայպ օլմուշ տըր. գիրա էօմրիւմ իսթամ վէրմէյէ գարար վէրտիմ. չիւնքի րուհումտան գիտաէ սէվտիկիմ ֆամիլիմ վէ էվաշարմըն:

սէֆալէթին կէօղիմ իլէ կէօրմէյէ իազաթըմ գալմատը. պու հալէրին սէպէպի իսէ բէաէրինտէն կէօրմէյէ էյիլէրի պէնտէն կէօրմէն ԱՌԱՔԵԼ ՕՏԱՊԵՆՆԱՆ, Առաքել Օտապչիւն եէկէնիմ օլան օ՝ ճանապարհան չէքտիկիմ ճէֆալարտան տըրքի՝ պէնի մատուի վէ մանալի էլիմէ օլան բարալըմըն եօզ իթալի. գալմատը, գալմանմատա. բարալըմ վէրմէյէ էյ ֆամիլիմ. էյ էվաշարմըն պանա աթ էտին. աթ էտին, ումարմ ալլան սիզէ էյի իշին ուլաշարմըն սիզի գուրթարը:

«Էյ ճանապարհան գիտաէ սէվտիկիմ եէկէնիմ Յովհաննէս աղա կէմիճեան. ալլան վարա սէնի տիւնեայ աշիթ հէր ճիւլէթի իլէ ինեա էյլէսին. գիրա սէնաշէն կէօրմիլիմ րաշէթ, ինաշիլէթ վէ ալիճէնալըզ սօն տէրէ-ճէյի կէլտի, ֆամիլիմ վէ չօճուլարմըն սանա վէ սէնին հիմալէնէ թէսլիմ էտէրիմ. վազա չօզ վէ բէք չօք աղըր մէսէլէտի, լազին չօզ րէ-ճա էտէրիմ պու. էյիլի պաշա չըգար վէ Առաքել իլէ օլան հէսալըմըն տալի չօճուլարմըն թարաֆընտան պիր վէքեալէթ իլէ թէսլիլէ էյլէ. Ալլան պանա աթ էթսին, տիվաէ եաշանա-մամ, գիրա աղըրա խըֆէթ կէլի-յօր. եալըրալըմ սիզաէ պանա աթ էտին. պապանըջ նամուսու իշին էօլիւյօր. նամուսու գիլէ պաշա չը գամալօրմ. քէզա էլիմէ ալեճու-տա գալմատը. գաթ էթմիշ վէրմէյէ ալլան հալալէ էթիմ:

«Թաղաւումա բարազ իստէմէմ. հէմ քիլիսէ ճէվալ վէրմէյ. հէմտէ բարսմ եօզ տըր. պարի օլ բարալար իլէ 5 կիւն տանա չօճուլարմըն եաշարն. ալի. ալի, ալի էլմա կիլի չօճուլարմըն վէ ֆամիլիմտան էպէտիլ էպէտ ալըրմըն. սէպէպի իսէ էյիլէ գարըջ ֆէնալըզ տըր. հիւքիւմէթ թարաֆընտան քիմէյէ էգիլէթ վէրիլմէսին քէնտի էֆքեարմա գարարմըն տըր:

Տեղալի Սարգիս Յ. Սըմալեան

«Օնիկ աղա կէմիճեան էվալթի-րմա վէ ֆամիլիմա մուգալէթ օլէ մանէթլէրի սանա. Սուրբիկ սէօզմէ

մէզարմա, սիզէ չօզ գանմէթ վէ մէ-շազէթ չէքտիլարմ աթ էթ. Նուարդ, Օնիկ պապանըջա լանէթ օգուճանըն: Սիզէ ֆէնալըզ իտէօրմ տէյի եար. մայօրմ. Ալլան պէօլէ հէր կիւն սիզի մանուէն էտէն պիր պապատան գուրթարալըմ:

«Նէ չէքտիլ վէ չէքիյօր իստէմատէ էյի ելիլէթիմտէն վէ պու. թաշարմըն գալմատան տըր, պու հալալէ պու գաթիլ բաթալթմալը. եալըրալըմ սազըն սիւնա թաղըմ կէյիմէյին. չիլա սիւնա թաղըմ ալմանատա բարալըմ եօզտըր. քէզա պուլար պօշ չէլլէր տիր. գաթէն տիւնեայա պօշ. աթիւս՝ էվալարմ, աթիւս՝ գուգուլարմ, աթիւս՝ եա՝ պախտըզ գարմ. պիր աթէմ քէնտի ուֆաք պիր էյիլէ-րէսի իշին պիր ֆամիլիմա բէրու-շան իթալի. աճապա Ալլան վաճըր, չէրիլթ վաճըր, պիլմէյօրմ. ֆիմ-սէնէ պօրճու եօզտըր, նամուսու իլէ եաշարմ. նամուսու գալար պու հալի պաշմա կէթիլարմէյ:

Պու հէգիւնը մէքթուպըն ալը միւսթան իթալէ, 2765 նօմէրօլը էվալարմա մաշֆուլը աըր:

Սըմալեան էֆ. սօն տաղըզա սընտա շու լազըրտըլարը իթմիշ տիր

Աճալէ եկէնիմ Առաքել Օտապչիւնըն ապէպիլէ էօլէն տալըր Սարգիս Սըմալեան, տէյու մէզար քաշըմա եաղըն տէյու վա-սիլէթ իթմիշ տիր:

ԱԲԳ

ՄԱՍՆԱԿԵՑ ԳԻՆԵԿՈՐԾ

Դինի եւ ամեն տեսակ ըմպելի մասնագէտ ազգային մը որ երկար տա-րիներ Եւրոպա եւ ալլուր իր արհեստը իգործ գրած է մեծամեծ գործարանե-րու մէջ, այժմ փափաք կը յայտնէ Պալկարի մէջ հայ ֆալիքալիսի մը հետ ընկերակցութեամբ գինի եւ ու-րիշ ըմպելիքներու վրայ գործեր ընելու փափաքը բանակցութեան համար գինի խմորութեան:

աւին կը լուծենք մեր վրէժը: Միթէ՞ չիս ընդունիլ: — Ա՛խ, երախտապարտ եմ... մըմընց մանկա-մարդ աղջիկը՝ գորովանքով մը անուր ձեռքը համ-բուրելէ հաքը:

— Կընդունիս, չէ մի՞, վրայ բերաւ ծերունին:

— Ամենա՛յն սիրով:

— Ուրեմն, միտա՛գարով: Չը մտնաս յիշու-նչանս: Երբ հրէջը տունէն բացակայ ըլլայ, ախո-սին պատէն կարմիր թաշկինակիս երեւալը պիտի յայտնէ քեզի:

— Երթա՛ս-գարով, սիրելի հայր, թոթովեց միտ-կամալը աղջիկը՝ կրկին համբուրելով անուր չորցած ձեռքերը:

Միւս Սեպար, առանց չընել մը հանելու, խոհա-նոցի միջանցքէն վար իջաւ ու պարտէզը մտաւ:

Մանկամարդ աղջիկը մինակ մնաց:

Հոգին հանգարտած էր, ինչպէս ալիկոծուած ծով մը՝ մըրիկէ մը հաքը. սիրտը չէր զաքնիւր կուրծքին տակ. ճակովին հրատապ ըզը մարած էր կարծես, երեւակայութիւնը սարսաղիլէ երեւոյթէ մը աղատած էր... Իր բովանդակ էութեան մէջ չունէ մը ան-ցած էր:

— Չէ՛... Աստուած չը լքեր մեզ բոլորովին, բացառանց մանկամարդ աղջիկին ինքնիւրէն: Ան է որ ձայնս լսեց, Ան է որ այս սեմերէն ներսը բարի մարդ մը առաջնորդեց, Ան է որ այս միթիլարու-թիւնը տուաւ ինծի... Յոյսս չեմ կորցր... մեր թշուառութեան չափը լեցուած է...:

Այսպէս, բոլոր գիշեր միտքուն անցուց: Առ-տուն, արեւը ծագելու մօտ, իր սենեկին զուռը, արցունքաւ ու ներս մտաւ բարձրահասակ, ծաղկա-

ւեր գիմագծերով, յաղթանալով ու թուի մազերով մարդ մը, որ հազարապետն էր:

Մանկամարդ աղջիկը չուտով մը ոտքի ելաւ ու կեղծ ժպիտ մը պատկերացուց իր տօգոյն չըթուէր-նեւուն վրայ:

Հազարապետը մանկամարդ աղջկան աչքերու մէջ նայեցաւ ու հասկցաւ թէ արտասուած էր ան. հե-տեւաբար նեղացած կողմակով մը բազմոցին վրայ ինկաւ ու հարցուց.

— Դարձեալ լացե՞ր ես, Սէլվի՛:

— Ո՛չ... ո՞վ կըսէ, պատասխանեց մանկամարդ աղջիկը, որուն Սէլվի անուն տուած էր հազարա-պետը:

— Ինչպէս չէ՛... միթէ՞ աչքերուդ կոպերը չեն յայտնի:

— Իրա՛ւ որ չեմ լացեր, կրկնեց Սէլվի:

— Կը սաեա, Սէլվի՛, ընդհատեց հազարապետը: Դուն ամեն օր կուլաս, ամեն օր կը մաշես Կիւ-ղիքը... Ինչու համար... արդեօք քու ան-նշան քաղաքի մէջ աւելի երջանիկ կրնայիր ըլլալ... Մտածէ՛ անգամ մը... Ինչե՞ կը պակսի: Այսօր գուն տիւրուհի մըն ես ասանկ ապարանքի մը... միեւնոյն ատեն սրտիս ամենէն սիրածն ըրեր եմ քեզ: Ա՛լ ինչ կուզէիր... ա՛լ որո՞ւ համար արցունք-նիւր կը թափես...:

— Բայց ինչու չես հաւատար որ այս գիշերը լա-ցած չեմ:

— Չէ՛... ա՛լ չեմ խաբուիր, Սէլվի՛. գուն աչքե՛ք հետացուցած չես Կ. քաղաքի բանին մէջ սպասող երիտասարդը, մոռցած չես անուր յիշատակը, կտրած չես սիրեղ անկից... Աս է պատճառը

քու արցունքներուդ, քու մաշուկուդ եւ քու գաղտնի կսկիծներուդ: Բայց կըսեմ թէ՛ անօգուտ է. քու սէրդ անսր չես կրնար տալ: Դուն իմ կինս ըլ-լալէ առաջ, գիտցիր որ ճշմարիտ Միւսթիման մըն ես ու տէրը չես քու անձիդ: Մոռցի՛ր ատ յիմա-րութիւնդ. սէրդ ու սիրտդ տո՛ւր քու երջանկու-թիւնը պատրաստողին:

Սէլվի չը կրցաւ իր արցունքը զսպել... կանոցի հոգին անկարող կըսէ հանդուրժելու: Ձեռքը գոդ-գոլով աչքերուն տարաւ ու սրբեց արցունքներն, որոնք իր այտերուն վրայ լեցուեցան:

Հազարապետը խոժոռ նայուածքով մը Սէլվիի աչքերու արցունքին նայեցաւ ու գողգողաց: Որչա՛փ որ բարկութեամբ մը կը խօսէր անուր հետ. սակայն չէր կրնար առել զինքը: Չափազանց սէր մը կա-պած էր իր սիրտը... կը զգար թէ անկից բաժ-նուելը անհնար էր իրեն համար: Ուստի ձայնը մեղ-մացներով, ըսաւ.

— Մտիկ ըրէ՛, Սէլվի՛, արցունքներ թափելու տեղը չըլլայ. վայելէ՛ բողբոլ բարիքները: Միեւ-նոյն ատեն, յիշէ՛ որ ձեռքէս եկածը չեմ խնայիւր բանաւորեալ երիտասարդ փրկելու:

— Ո՛ւր է... Ինչու խոստումը չես կատարել, մըմընց Սէլվի՛ տոռնց նկատելու. որ այդ հարցումը հազարապետին սիրտը կը խցտտէր:

— Շատ կը փափաքե՛ս... նկատել տուաւ հա-զարապետը խղիւղով իր մէջ ննդութեան երե-ւոյթը:

(Շարունակելի)

ԲԱՌԱՐԱՆ

ՊՈԼԿԱՐԵՒԻ -- ՀՍԵՒԷՆ -- ՏԱՃԿԵՐԷՆ

30 ՐԻՆԵՑ

ԱՍՏՆՈՒՐ ՄԿԵՏԻՉԵԱՆ

— ԵՐԵՎԱՆ —

Կր բաղկանայ 500է աւելի երկսիւ-նակ երիտներէ. քնտիր թուղթի վրայ մաքուր տպագրութեամբ, պարունա-կելով Պուլկարեւէն լեզուի գործածա-կան գրեթէ բոլոր բառերը եւ ոճիւրը — մօտ 30,000:

Հրատարակուած են տոաջին մի քանի պրակները եւ միացեալին տպա-գրութիւնը մեծ փութով յառաջ կը տարուի, այս նպատակով կազմուած Մասնախումբիս հսկողութեան տակ:

Բաշակնորդսգինն է 5 փր. կանխիկ ճամբու ծախքը մեր վրայ: Տապագրու-թիւնը երբ աւարտի, բաժանորդք այն ատեն պիտի ստանան Բառարանը կազմուած Իսկ եթէ ուղղութիւնը լան, հրատարակուած պրակները հե-տընեմէ եւս կրնանք զրկել (չորսը մէկ ծրարով):

Տպագրութիւնը աւարտելէն վերջը գինն պիտի շարժուանայ: Դրամի փո-խարէն նամակագրօջմ չընդունուի:

Հասցիքին մէկ մասը յատկացուած է տեղւոյս ազգ. վարժարանին:

Փափաքողք բաժանորդագրուելու համար գիմելու են Մասնախումբիս գանձապետին հետեւեալ հասցեով:

Տ. Մասթոս Յակոբեան — Սօֆիա

ՄԱՍՆԱԿՈՐԾ

"ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ"

Ամերիկայի ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ թերթը խմբագրական նոր ուժերով այժմ շարքի երկու անգամ հրատա-րակուել սկսած է:

Այս կողմերէ անոր բաժանորդ ըլլալ ուղղութիւնը կրնան ԻՐԱՆԻՆԻՔի խմբագրութեան միջոցաւ բաժանորդա-գրուիլ կանխիկ զրկելով մեզ 12 1/2 ֆր արծաթ, մէկ տարուան համար:

ԻՐԱՆԻՆԻ

Քեոյեքոսէ իգամէր խոռոպոսէ՝ քա-
նաիր միշտնապէս իւր շու կիւն.
լեւոսէ Տօպրիւն կիւնէն ապօնէյէ
րիւմիկ կազմէրս պօրձարքնը Մ.
Սիւսկեանա (Փօրօկրաֆ) էօտեմէ
յէ պիգի մեմնուն իտեմէքլէր:

Սիլիստրէ կիւնէյէ տախի
Մ. Արքաքի Սարգիսեանա քէե-
տիյէ իտեպիլիլէր:

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Իգտաւ Պուլկարիտան պահս
իտուպ, եէնի գապիւնէնին բօլիթի-
գասընը թահսին էյլէմէքտէ վէ
Թիւրքիա վէ Պուլկարիա պէյնիւ-
տէ էվլէթի միւնասէպաթը տօս-
թանէի թէճտիտ իշին, ժէնէրալ
Բէթրոզըն զայրէթինի թագաթի
թիմէքտէ տիր: Ֆագաթ պուլկար
կազմէթաճըլարը աքսի օլարագ
պու բօլիթիգայը թէքպիհ իտե-
յօրլար:

— Օսմանլի հիւքիմէթինին ու-
մուս պօրճարընը պիլէշտիթմէք
մէսէլէսի հալլ օլընուպ, գարար-
նալէլէր իմզալանը վէ տիլոնը
ուսուսիյէ տիրէթթօրը մէգուսի-
յէթլէ էվրօրայա կիթմիշ օլընը
Սթանպօլտան պա թէլէկրաֆ
էլտիրիթմիշ տիր:

Մաքթոնիա

Բուս, Աւստրիա վէ Պուլկար
հիւքիմէթլէրին իտտասը իւզէ-
րինէ, Մաքթոնիա տա մահպուս
պուլընան պուլկար բարասլարը
վէ հօճալարը Ասիա վէ Աֆրիգա
զըթալարընա սիւրմէք էֆքեարըն-
տան թիւրք հիւքիմէթի վազ կէշ-
միշ տիր:

— Թէսալիտան Մաքթոնիա-
յա կէշմէք իւզրէ պուլընան պիր
պուլկար չէթէսի էտուն հիւքիւ-
մէթինտէն տէրտէսթ օլընըպ,
Սէլանիկէ նագլ իտիլմիշ տիր:

— Սապըգ ասքէր գայմագամը
Սթանանօլըն գօմանտասը ալթըն-
տա պուլընան պիր չէթէ Ճուսա
գագասընտա Գիլգա նամ քէօյտէ
Թիւրք ասքէրի իլէ վուրուշմուշ
տըր:

— Սմարտիշ քէօյիւն գըրկընընա
վէ եագըլմասընա գարշը ուս էլ-
չիսի չէտիտէն բրօթէսթ իթմիշ
օլմալլէ, Սուլթան գօմիսօն Եօլ-
լայուպ, իշի թահգիթ իթմէք վատ
էյլէտի:

— Մաքթոնիա միւքէթթիլի
ուսուսիսի հիլմի բաշա, իւշ վի-
լայէթլէրին պիւտեմէսին չէօյլէ
թասթիթ իթմիշ տիր:

Վարիտաք յըշ
Սքիւպ վիլայէթի 50,712,188
Սէլանիկ » 67,410,588

Մանասթըր » 43,143,511
161,266,282

Մեւարիֆաք
Սքիւպ վիլայէթի 22,606,093
Սէլանիկ » 40,753,985
Մանասթըր » 30,479,393
93,839,474

Իշպու րագամար իլէ 67,426,511
զըշ վարիտաթտան արթըյօր, բա-
շաի միւշարիլէյհ պու Ֆազլանըն
մէսարիֆաթը ասքէրիյէ սարֆ ի-
տիլմէմէսինի թագաթիյէ էյլէմիշ
տիր:

— Էտիրնէ վիլայէթինտէ Գօ-
գօրտան պայիլ նամ տաղ էթէ-
կինտէ իւշ պուլկար չէթէլէրի վէ
Թիւրք ասքէրլէրի պէյնիտէ միւ-
սատէմէ վուգու պուլուպ, 8 պուլ-
կար վէ 5 թիւրք թէլէք օլմուշ-
լար:

Տիկէր պիր չէթէ տախի Գատիքէօյ
նամ մէվգըտա աբանըզա կէլմիշ
տիր, Պու չէթէ 5 քիշի գաթի
իթմիշ:

— Սթանպօլտան Էմտէքան.
տաւա պիւտիլիտիկ իւզրէ,
Գարագինա քէօյիւնտէ պուլկար
չէթէլէր Ալպանիթի նամ պիր րու-
մը տաղա աշըրուպ, անը սէրպէսթ
պըրագամաք իշին բէտէրինտէն ագ-
ճէ թալէպ իտէրլէր. բատէրի իս-
թէնիլէն մէպաղը կէօնտէրմէտիկի
սէպէպլէ, չէթէլէր Ալպանիթի
խաշա չըգարըրլար:

Ալպանիա

Պուլտան էվլէ Պապը Ալինին
վէ Եըլտըզըն կէօնթէրմիշ օլտըր
թէմինաթ իւզրէ, Հասի վէ Բա-
հա նամ արնափուտ գապիլէրի
իւլահաթը գապուլ իտուպ Սուլ-
թանա իթաթ իթմէք վատ իթ-
միշլէտի. ֆագաթ սօն հապատի-
սաթա պինտէն, մէքըիւր գապի-
լէլէր թէքրար իսահաթա գարշը
իթաթաթըլըղա պաշալմըշլար, վէ
արնափուտ ըլիլիլէրինտէն նամտար
Սիւլէյման ալա ըսիտ սանճաղընը
չէքուպ, Տէշանէ նամ մանաստըր
եագըն օրտուսընը գուրմուշ մուգա-
վէմէթէ հազըր պուլընըյօր:

— Արնափուտ ըլիլիլէրինտէն
100 քիշինին Անտօլույա կէօնտէ-
րիլիլէր Եըլտըզտան թաստիգ օ-
լընըյօր:

ՏԱԽԻԼԻԹԷ

Պեոյիաք Միքիկ

Եարըն Սօֆիատա պիր մուհիմ
միթինիլ թէճէմիլ օլընաճագ տըր:
Պուլկարիանըն հէր չէհիլլէրին-
տէն մէօթէպէր վէ ալիմ զաթլար
իքի կիւնտէն պէրու Սօֆիատա
թօրանմագտա տըրլար: Իշպու
միթինիլտէն մագսէտ՝ եէնի գապի-
նէնին Թիւրքիա իլէ տօսթլըգ
պէօլմէք բօլիթիգասընա գարշը
բրօթէսթ իտէրէք՝ եա Մաքթոն
նիա իսահաթընը թէլէմին իթմէք

վէ եաթօտ Թիւրքիայա գարշը
իւնը հարպ էյլէմէքտէն իպարէթ
տիր:

Սօֆիա կազմէթալարըն էքսէրի-
սի պիր գաշ կիւնտէն պէրու պու-
մագսէտէ շէտիտ պէնտլէր եագ-
մագտա վէ ժէնէրալ Բէթրոզ գա-
պիւնէսինին միլայիթէթինի թէք-
պիհ էյլէմէքտէ տիրլէր:

— Պուրկազ իթանլըն ըլէմի
քիւշաթը զինէթինտէ ֆէլաթ.
Բրէնս թէպրիգ էսնասընտա
Թիւրք վէ Ետուն գօնսօլըլարը-
նա էլինի վէրմէմիշ օլտըր պիր
պուլկար կազմէթաթը եագլըշ տըր:

— Ֆէլաթ. Բրէնս կէշէն կիւն
էպինթալա կիթմիշ օլուպ, տիւն
Սօֆիայա ալտէթ իտէճէկի մու-
գարրէր իտի:

ԱՆՍՏՐԻԱՏԱ-ԷՐՄԵՆԻԼԷՐ

Չէրնօվիտէն (Պուգօվինա) ի'Ան-
մէնի կազմէթաթընա եագըլտըր
իւզրէ, Աւստրիանըն կալիցի վէ
Պուգօվի էյալէթլէրինտէ միւթէ-
մէքին միլլէթաշլարըմը 150 իմ-
զա իլէ Աւստրիանըն Բարլըման
ազալարընա պիրէր արիգէ թագ-
տիմի իլէ, Թիւրքիատաքի էրմէ-
նիլէրին մուհիպի թէէսիլէ ահպա-
լինտէն տօլայը հիւքիմէթին տըգ-
գաթընը տալէթ իթմէլէրինի ըէ-
ճա իթմիշլէր իտի:

Մէլքիւր Բարլըմանտա (ուշ-
լաշլաթ) էրմէնիլէրտէն պէշ ազա
պուլընտըր հալտէ, պուլարտան
հիշ պիրիսի պու միլլի մէսէլէ
հագգընտա հիւքիմէթի նէ իս-
թիմիպա իթմիշլէր վէ նէ տէ պիր
սէօգ սէօյլէմիշլէր:

Ռէյլաշլաթտա եալընը պիր ա-
վօգաթ եահուտի, մէպուս Տօք-
Պէննօ Սթօլէր, էրմէնի մէսէլէ-
սինի միւտաֆաա իթմիշ վէ վիւ-
քէլա ըլիսի Մ. տը Գօնէրպէրի
էրմէնիտան էհալիսինին ահպալի.
նէ տայիլ՝ պէլիլ պիր իսանլէ
իսթիմիպա էյլէմիշ վէ Պէրլին
ահանմէսինի իմզալմըշ օլան
Աւստրիա տէվլէթինին էրմէնի մէ.
սէլէսի իլէ իշիլղալ իթմէսինի
ըէճա էյլէմիշ տիր:

Կալիսի վէ Պուգօվինա էրմէնի-
լէրի պիր թէլէկրաֆնամէ իլէ մէր-
գուս ալիճէնապ մէպուսա պէյանը
թէլէքիւրաթ իթմիշլէր: Պու
տախի Թիւրքիատաքի էրմէնիլէ-
րին լէհինէ սէպաթլէ շալըշ՝ ճա-
ղըն վատ իթմիշ տիր:

Բէկա Տօք. Սթօլէր Չէրնօվից
տէ պիր միթինիլ թէճէմիլ ի-
տուպ, քէմալը ֆիրասէթլէ էրմէ-
նի վիլայէթլէրին ահպալը հազը-
րէսինի նագշ ու թարիֆ իթմիշ
տիր:

Պու գաթ մէնֆաթաթըրէսթ պիր
քիմէ օլմայուպ, եալընը հագ-
գաթիլէթ ու տալիթ կէօրտիկի
սէպալլէ էրմէնի մէսէլէմինի մու-
հաֆագա իտէյօր, Պիգ տախի
մէրգուլըն շու ֆէտաքեարըլըն-
տան տօլայը հըսս իթմիկիմիգ

չիւքրանիյէթի վաթանտաշլարըմը
նամընա ալէնէն տըգ իթմէկի վա-
զիֆէ տտտ իտէրիլ:

Ի'Անմէնի

Միթիլէնէվլիթէ

Բէշլթատան բօսթայը նագլ
իտէն արագաճը՝ մէօթատ իւզրէ,
բօսթահանէ մէմուրը հազըր պու-
լընմաթըր պիր սըրտա, արա-
պասը իլէ գաշուպ, զալպ օլուր:
Չանթատա պուլընան էմանէթլէ-
րին մըգտարը 400-500,000 գրօն
հէսապ օլընըյօր: Հիւքիմէթ վու-
գուաթը ազալմ տույար վէ արա-
պաճըլը պուլմագ իշին թէտպիլ-
լէր էլէ ալըր:

— Իթալիանըն էքսէրի Շէհի-
լէրինտէ, Բօմա, Նարօլի, Միսի-
նա, Վէրօնա վէ սարիլտէ, էհալի
Աւստրիա տէօվլէթինէ գարշը նիւ-
մայիշաթ իճլա իթմէքտէ օլուպ,
պուլուսն նէթիճէսի իթալիանըն
իթթիֆագը միւսէլլէտտէն ալ-
ըրմասընա վէսիլէ օլաճագ զանն
օլընըյօր:

— Մ. Ամերիկատա Միսիսիպի նէհ
լինին զալպ ճիհէթինտէ զալթի
չօգ եաղմուրար սէպէպի իլէ 150
քիշի էօլմիւշ, 30,000 էվսիգ գալ-
մըշ վէ 4,000,000 էրալըգ խա-
սարաթ օլմուշ տըր:

Բէկա պիր եանկըն գուհուր ի-
տուպ 400 խանէ եանմըշ վէ 100
քիշի ալէֆլէրէր գուրպան օլմուշ:

ՍՕՆ ՀԱՎԱՏԻՍԼԷՐ

Սրաւալ, 24 Մայիս

Մ. Նաչօվի Պապը Ալիտէ վէ Եըլ-
տըգտա հիւսնի գապուլ պուլտու:
Անըն մէսէլէ պուրատա հիւքիմ իտէն
էֆքեարը թէտգըգ իթմէքտէն իլէրի
կէշմէլէքէ կէօրիւնիյօր:

Մ. Նաչօվի Բուս վէ Աւստրիա
էլլէլէրի իլէ տախի կէօրիւնիւ.
պուլար Պապը Ալի վէ Պուլկարիա
պէյնիտէն միւնասէպաթը էյիլլէտի-
մէք էֆքեարընա մէյիլի տիրլէր: Պու
թարիլլէ Մաքթոնիա ահպալը էյիլ-
լէքէ գանն օլընըյօր:

— Պապը Նլի իքի էլլիլէրին թալէպի
իւզրէ, մահպուս օլան պուլկարար-
տան 400 քիշի չըգարմըշ օլտըրըն
պիլտիրտի: Վէ պիր թարաֆտան պի-
տուշ օլանլար թախիլլէ օլընըյօրլար:
Փագաթ էլան 1000 տէն զիյատէ մահ-
պուս վար տըր:

ԹԱՏՐՈՆ «ՊՕՐԻՍ»

(Ամանային Շրջան)

ՆԱՏԵԺՏԱ

Հայ դերասանական խումբը այս
գիշեր ճիշդ ժամը 9ին պիտի ներկա-
յացնէ:

ԹՈՒՆԱԻՈՐԻՉ ԱՊԱՐԱՆՁԱՆԸ

Թատերախաղ 3 արար

Առաջնորդութեամբ Տ. ՊԱՊԱՆԱՆԻ

ԵՂԵՐԵՐԻ, ԵՐԳԵՐ և ԳԱՐԵՐ

Նկատելով որ մեզ պատուող
եւ ներկայացմանը հանգիստտեա թա-
տերասէր ժողովուրդը միմիայն եւ
միմիայն լուրջ տրամենր եւ սրտաշարժ
թատերախաղեր կը պահանջէ, խումբս
ըստ կամոց թատերասիրաց ամեն հինգ-
շաբթի եւ չաբաթ երեկոնները բարո-
յալից տրամենր, իսկ կիրակի երեկո-
նները եւրոպական կեանքէ առնուած
գօմէտներ ներկայացնել որոշած է:

ՆԱՏԵԺՏԱ

Հայ. Դեր. Խումբ

Одговорника Е. Драгачева

Печатница Взаимность Варна